ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՐՑԵՐԻ ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 12-րդ հոդվածով, Ազգային ժողովի աշխատակարգի(այսուհետ՝ Աշխատակարգ) XX բաժնով, Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 9-ի նիստի որոշումը, ստեղծում է Հաշվեքննության և աուդիտի ենթահանձնաժողով (այսուհետ՝ Ենթահանձնաժողով):
2. Ենթահանձնաժողովը գործում է մինչև Հանձնաժողովի լիազորությունների ավարտը, եթե Հանձնաժողովն իր որոշմամբ չի կայացրել Ենթահանձնաժողովն լուծարելու մասին որոշում:

II. ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Ենթահանձնաժողովը ստեղծվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում Ազգային ժողով ներկայացվող Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների, իսկ առկայության դեպքում նաև հաշվեքննության օբյեկտի ղեկավարի կողմից ընթացիկ եզրակացության վերաբերյալ տրամադրված տեղեկատվության, ինչպես նաև Հանձնաժողովի իրավասությանը վերապահված այլ հարցերի նախնական քննարկման և դրա արդյունքները Հանձնաժողով ներկայացնելու համար:
2. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները կամ հղումները Ենթահանձնաժողովի անդամներին հասանելի են Հաշվեքննիչ պալատի կայքից կամ տրամադրվում են Հանձնաժողովի կողմից՝ դրանք Հանձնաժողով մուտքագրվելուն պես:

III. ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Ենթահանձնաժողովում կարող են ընդգրկվել միայն Հանձնաժողովի անդամները: Ենթահանձնաժողովում կառավարող և ընդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված Հանձնաժողովի անդամների համամասնությունը պահպանվում է:
2. Ենթահանձնաժողովի ղեկավարը նշանակվում է Հանձնաժողովի որոշմամբ:
3. Ենթահանձնաժողովի ղեկավարը կազմակերպում և ղեկավարում է նրա աշխատանքները, ինչպես նաև կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

4. Ենթահանձնաժողովի գործունեության մասնագիտական և կազմակերպչական սպասարկումն իրականացնում է Հանձնաժողովի քարտուղարությունը:

IV. ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

1. Ենթահանձնաժողովի անդամները Ենթահանձնաժողովի նիստի հրավիրման մասին

տեղեկացվում են ոչ ուշ, քան երկու աշխատանքային օր առաջ հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով:
2. Ենթահանձնաժողովի նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա է անդամների ընդհանուր թվի կեսից ավելին :
3. Ենթահանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը կազմում և նրա նախագահին է ներկայացնում Հանձնաժողովի քարտուղարությունը: Օրակարգում ընդգրկվում են Ազգային ժողով ներկայացված Հաշվեքննիչ պալատի նախորդ ամսվա ընթացիկ եզրակացությունները: Նիստերը գումարվում եմ ամեն ամիս՝ մինչև տվյալ ամսվա 10-ը:
4. Ենթահանձնաժողովի նիստը նախագահողն ունի Կանոնակարգի 52-րդ հոդվածով սահմանված լիազորություններ այնքանով, որքանով դրանք կիրառելի են Ենթանձնաժողովի նիստը նախագահելու համար:
5. Քվեարկությունն իրականացվում է ձեռք բարձրացնելու միջոցով: Ենթանձնաժողովի անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ, դեմ կամ ձեռնպահ:Ենթանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած Ենթահանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել Ենթահանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

V. ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Իր գործունեության արդյունքների մասին Ենթահանձնաժողովը սահմանված ժամկետում զեկուցում է Հանձնաժողովի նիստում:
2. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ Ենթահանձնաժողվն իր ուսումնասիրությունների արդյունքում ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.
1) Հանձնաժողովին առաջարկել Ենթահանձնաժողովում ուսումնասիրած ընթացիկ եզրակացությունը քննարկել Հանձնաժողովի նիստում,
2) Հանձնաժողովին առաջարկել Ենթահանձնաժողովում ուսումնասիրած ընթացիկ եզրակացությունը քննարկել Հանձնաժողովի և ոլորտային հանձնաժողովի հետ համատեղ նիստում,
3) Հանձնաժողովին առաջարկել Ենթահանձնաժողովում ուսումնասիրված ընթացիկ եզրակացությունը չքննարկել Հանձնաժողովի նիստում,
3. Ենթահանձնաժողովը Հանձնաժողովին է առաջարկում ընթացիկ եզրակացությունը հանձնաժողովի նիստի կամ ոլորտային հանձնաժողովների հետ համատեղ նիստի ընթացակարգի նախագիծը, զեկուցողների և հրավիրվածների ցանկը:
4. Ենթահանձնաժողովի առաջարկությունների հետ անհամաձայնություն ունեցող պատգամավորը կարող է իր առաջարկությամբ եզրակացության մեջ ներառել իր անհամաձայնության առարկան և առաջարկել Հանձնաժողովի նախագահին այն քննարկել Հանձնաժողովի նիստում:

5. Ենթահանձնաժողովի որոշմանն ի լրումն Հանձնաժողովի նախագահը կամ Հանձնաժողովի անդամ այլ պատգամավոր իրավասու է իր առաջարկությամբ հանձնաժողովի քննարկման առարկա դարձնել ենթահանձնաժողովի որոշման մեջ չներառված Հաշվեքննիչ պալատի այլ ընթացիկ եզրակացություններ: